ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ Ա Վ Ա Գ Ա Ն Ի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

7 փետրվարի 2017թ. N 21-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 7-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետին համապատասխան ավագանին **ո ր ո շ ու մ է՝**

1. Հաստատել Ջերմուկ համայնքի ավագանու 2017 թվականի փետրվարի 7-ի արտահերթ նիստի հետևյալ ***օ ր ա կ ա ր գ ը.***

1.1. Ջերմուկ համայնքի Գնդեվազ գյուղում գտնվող հողամասերի նպատակային նշանակությունները փոխելու մասին.

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ-ճարտարապետի պաշտոնակատար Ա. Գառնիկյան

1.2. Ջերմուկ համայնքի արոտավայրերի և խոտհարքների օգտագործման կարգը հաստատելու մասին.

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի պաշտոնակատար Գ. Թադևոսյան

1.3. Ջերմուկ համայնքի արոտների օգտագործումը ըստ արոտավայրերի և խոտհարքների օգտագործման կարգի կազմակերպելու համար հանդապահի հաստիք սահմանելու և հանդապահի աշխատանքային նկարագիրը հաստատելու մասին.

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի պաշտոնակատար Գ. Թադևոսյան.

1.4. Ջերմուկ համայնքի ավագանու 2016 թվականի նոյեմբերի 10-ի N 60-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու և 2017 թվականի հունվարի 16 N 10-Ա որոշումը չեղյալ ճանաչելու մասին.

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի պաշտոնակատար Գ. Թադևոսյան

1.5. Ջերմուկ համայնքի գյուղական բնակավայրերում անասնաբուժական ծառայությունների մատուցման դիմաց անասնաբույժին վճարելու համար մեկ պայմանական անասնագլխաքանակի հաշվով գումարի սահմանման մասին.

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսական բաժնի պետի պաժտոնակատար Ա. Ղազարյան

1.6. «Ձնեմարդուկ 2017՝ ձնե արվեստի փառատոն» երիտասարդական համաքաղաքային միջոցառմանը դրամական աջակցություն ցուցաբերելու մասին.

զեկ. համայնքի ղեկավարի տեղակալ Ս. Մարգարյան

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Ավագանու անդամներ՝

ազգանուն, անուն, հայրանուն	կողմ	դեմ	ձեռնպահ
Բաբայան Կավկազ Զավենի	բացակա		
Բաբաջանյան Սանասար Խաչատուրի			
Բագրատյան Արտակ Կառլենի	բացակա		
Բունիաթյան Մխիթար Խաչատուրի			
Գևորգյան Արտավազդ Վարազդատի			
Գրիգորյան Արմեն Գրիշայի			
Համբարձումյան Մխիթար Սամվելի	բացակա		
Հովհաննիսյան Նարեկ Հարությունի			
Սարգսյան Հասմիկ Ժորայի			
Սիմոնյան Արտուշ Էդվարդի			
Ստեփանյան Գագիկ Ստեփանի			

Որոշումն ընդունված է՝ կողմ- ....8..... դեմ-....0..... ձեռնպահ- ...0.

/ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2017 փետրվարի 7
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ Ա Վ Ա Գ Ա Ն Ի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

7 փետրվարի 2017թ. N 22-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՆԴԵՎԱԶ ԳՅՈՒՂՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետին, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետին և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011թ. դեկտեմբերի 29-ի «Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաներ կազմելու կարգը հաստատելու մասին և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2001 թվականի հունվարի 17-ի թիվ 30 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 1918-Ն որոշմամբ հաստատված կարգի 17-րդ կետին համապատասխան և հիմք ընդունելով «Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի» 20.01.2017 թ. N 5 դրական եզրակացությունը ավագանին **ո ր ո շ ու մ է՝**

1.Ջերմուկ համայնքի Գնդեվազ գյուղում գտնվող, «Լիդիան Արմենիա» ՓԲ ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող՝ կից աղյուսակում ներկայացված հողերը փոխադրել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողերի կատեգորիա՝ արդյունաբերական օբյեկտների հողերի գործառնական նշանակության.

h/h	Հողամասի ծածկագիրը	Հողամասի մակերեսը, հա	Սեփականության վկայականի համարը	Նպատակային նշանակությունը	Գործառնական նշանակությունը
1	10-016-0222-0027	1,1616	28092016-10-0008	Արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության	Արդյունաբերական օբյեկտների
2	10-016-0224-0033	0,12459	18082016-10-0138		
3	10-016-0226-0046	0,14416	16082016-10-0009		
4	10-016-0226-0022	0,3437	12072016-10-0004		
5	10-016-0224-0071	0,3378	28102016-10-0003		

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ Ա Վ Ա Գ Ա Ն Ի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

7 փետրվարի 2017թ. N 23-Ն

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՈՏԱՎԱՅՐԵՐԻ ԵՎ ԽՈՏՀԱՐՔՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 42-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի ապրիլի 14-ի «Հայաստանի Հանրապետությունում արոտավայրերի և խոտհարքների օգտագործման կարգը սահմանելու մասին»N 389-Ն որոշումը՝ ավագանին **ո ր ո շ ու մ է՝**

1. Հաստատել Ջերմուկ համայնքի վարչական տարածքում գտնվող արոտավայրերի և խոտհարքների օգտագործման կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը :

Ավագանու անդամներ՝

ազգանուն, անուն, հայրանուն	կողմ	դեմ	ձեռնպահ
Բաբայան Կավկազ Զավենի	բացակա		
Բաբաջանյան Սանասար Խաչատուրի			
Բագրատյան Արտակ Կառլենի	բացակա		
Բունիաթյան Մխիթար Խաչատուրի			
Գևորգյան Արտավազդ Վարազդատի			
Գրիգորյան Արմեն Գրիշայի			
Համբարձումյան Մխիթար Սամվելի	բացակա		
Հովհաննիսյան Նարեկ Հարությունի			
Սարգսյան Հասմիկ Ժորայի			
Սիմոնյան Արտուշ Էդվարդի			
Ստեփանյան Գագիկ Ստեփանի			

Որոշումն ընդունված է՝ կողմ- ....8..... դեմ-.....0..... ձեռնպահ- ..0...

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2017 փետրվարի 7
Ջերմուկ

Հավելված
Ջերմուկ համայնքի ավագանու 2017 թվականի
փետրվարի 7-ի N 23-Ն որոշման

ԿԱՐԳ

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՐՈՏԱՎԱՅՐԵՐԻ ԵՎ ԽՈՏՀԱՐՔՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում են Ջերմուկ համայնքի վարչական տարածքում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող հողերի վրա գտնվող արոտավայրերի և խոտհարքների կառավարման և արդյունավետ օգտագործման պայմանները:

2. Սույն կարգի նպատակներն ու խնդիրներն են՝

1) Ջերմուկ համայնքում արոտավայրերի և խոտհարքների պահպանության և կայուն ու արդյունավետ օգտագործման գործընթացներին նպաստումը.

2) արոտավայրերի և խոտհարքների բերքատվության բարձրացման և վերականգնման համար նպաստավոր պայմանների ստեղծումը.

3) արոտավայրերի և խոտհարքների որակական բնութագրերի և բնապահպանական վիճակի վատթարացման կանխումը.

4) արոտավայրերի և խոտհարքների սանիտարական վիճակում պահպանության ապահովմանը նպաստելը:

3. Մինչև արոտավայրերի օգտագործումը կազմվում է արոտավայրերի օգտագործման պլան՝ հաշվի առնելով արածեցվող կենդանիների թվաքանակը և արոտավայրերի բերքատվությունը:

4. Արոտավայրերի կայուն և արդյունավետ օգտագործման նպատակով կիրառվում է արոտաշրջանառություն՝ հետևյալ սկզբունքներով՝

1) մինչև արոտային շրջանի սկսվելն ընդհանուր արոտավայրը բաժանվում է առանձին արոտամասերի (արոտաբաժինների), որոնք արածեցվում են որոշակի հերթականությամբ.

2) արածեցման հերթականությունը յուրաքանչյուր տարի փոփոխվում է.

3) նախորդ տարվա վերջին արածեցված արոտամասը հաջորդ տարում չի արածեցվում, թողնվում է «հանգստի»:

5. Արոտային շրջանի սկիզբը և ավարտը սահմանվում է յուրաքանչյուր տարի՝ ելնելով տվյալ տարվա կլիմայական պայմաններից:

6. Արոտային շրջանի տևողությունը Ջերմուկ համայնքում կազմում է՝ խոշոր եղջերավոր կենդանիների համար՝ 150-170 օր, մանր եղջերավոր կենդանիների համար՝ 180-210 օր:

7. Միևնույն արոտատարածքում ամբողջական բոլորապտույտով արածեցումների թիվն ամբողջ արոտային շրջանում սահմանվում է՝

1) մարգագետնատափաստանային և հետանտառային գոտիներում՝ 4-5 անգամ.

2) ենթալպյան գոտում՝ 5-6 անգամ.

3) ալպյան գոտում՝ 3 անգամ:

8. Կենդանիների արածեցումն սկսվում է գարնանը բույսերի վերաճն սկսվելուց 15-18 օր հետո, երբ արոտավայրում բույսերը հասել են հասունացման, իսկ արոտականաչի բարձրությունը հողի մակերեսից կազմում է՝

1) մարգագետնատափաստանային, հետանտառային և ենթալպյան գոտիներում՝ 12-15 սմ բարձրություն:

9. Մեծ թեքություններում (15° և բարձր), որտեղ առկա է հողատարման (էրոզիա) վտանգ և բուսածածկը համեմատաբար թույլ է, արածեցումը կատարվում է սահմանված ժամկետից 10-12 օր անց:

10. Կենդանիների արածեցման համար հատկացվող արոտատարածքի մակերեսը սահմանվում է՝ ելնելով արոտային թույլատրելի բեռնվածությունից:

11. Արոտային թույլատրելի բեռնվածությունն արտահայտվում է մեկ հեկտարի վրա տեղաբաշխվող պայմանական անասնագլխաքանակով և որոշվում հետևյալ բանաձևով՝

$$ԱԹԲ = \frac{Բ}{Պ \times Տ},$$

որում՝

ԱԹԲ-ն՝ արոտավայրի թույլատրելի բեռնվածությունն է,

Բ-ն՝ 1 հա արոտավայրի բերքատվությունն է (խոնավ արոտականաչի զանգվածը), կգ/հա,

Պ-ն՝ 1 պայմանական անասնագլխաքանակի օրվա արոտակերի պահանջն է՝ կգ,

Տ-ն՝ արոտային շրջանի տևողությունը՝ օրերով:

12. Արոտային բեռնվածության որոշման նպատակով մեկ պայմանական կենդանու գլխաքանակին տարբեր գյուղատնտեսական կենդանիները հավասարեցվում են հետևյալ գործակիցներով՝

1) կով, արտադրող ցուլ՝ 1.0.

2) խոշոր եղջերավոր կենդանիների սեռահասակային այլ խմբերի կենդանի՝ 0.66.

3) մանր եղջերավոր կենդանի՝ 0.1:

13. Մեկ պայմանական գլխաքանակի համար ամբողջ արոտային շրջանում անհրաժեշտ արոտատարածքը կազմում է՝

1) մարգագետնատափաստանային և հետանտառային գոտիներում՝ 1.5-1.7 հա.

2) ենթալպյան գոտում՝ 1-1.2 հա.

3) ալպյան գոտում՝ 2-2.5 հա:

14. Արածեցման արդյունավետ եղանակը հերթափոխային (համակարգված) արածեցումն է, որի կիրառման համար արոտատարածքը պետք է բաժանել արոտավանդակների, որոնց մեծությունը 100 պայմանական անասնագլխաքանակ ընդգրկող նախրի համար կազմում է՝

1) մարգագետնատափաստանային և հետանտառային արոտավայրերում՝ 20-30 հա.

2) ենթալպյան և ալպյան արոտավայրերում՝ 10-20 հա:

15. Հերթափոխային (համակարգված) արածեցման դեպքում ընդհանուր արոտատարածքը բաժանվում է հետևյալ թվով արոտավանդակների՝

1) ալպյան գոտում՝ 8-10.

2) ենթալպյան գոտում՝ 10-12.

3) մարգագետնատափաստանային և հետանտառային գոտիներում՝ 12-16.

16. Արոտավանդակներն առաջինից մինչև վերջինը, ըստ տեղադրվածության, արածեցվում են սահմանված հերթականությամբ՝ մինչև բոլոր արոտավանդակների արածեցման ավարտը, որից հետո կենդանիները դարձյալ փոխադրվում են առաջին արոտավանդակ և սկսվում է արածեցման հաջորդ բոլորապտույտը՝ ըստ հերթականության:

17. Արածեցված արոտավայրերում բույսերի կայուն վերաճ ապահովելու նպատակով արածեցման երկրորդ բոլորապտույտը պետք է սկսել առաջին բոլորապտույտի ավարտից 20-25 օր հետո, հաջորդ բոլորապտույտները՝ 35-40 օր անց, իսկ արոտավանդակներում արածեցման տևողությունը պետք է կազմի առաջին բոլորապտույտում՝ 2-3 օր, հաջորդ բոլորապտույտներում՝ 3-5 օրից ոչ ավելի:

18. Արոտավայրերում կենդանիների մակատեղերը (գիշերավայրը) պետք է կառուցել՝ ջրելատեղերից 300-500 մ հեռավորության վրա:

19. Ջրելատեղերի հեռավորությունն արոտավայրից պետք է լինի հետևյալ հեռավորության վրա՝

1) կթու կովերի համար՝ 1-1.5 կմ-ից ոչ ավելի.

2) բտվող խոշոր և մանր եղջերավոր կենդանիների համար՝ 1.5-2.5 կմ-ից ոչ ավելի:

20. Արոտավանդակների սահմանազատման նպատակով, որպես բնական սահմաններ, կարող են ծառայել արոտատարածքում առկա ձորակները, գետակները, հեղեղատները, թեքությունները, բացատները, թփուտները, ճանապարհները, իսկ դրանց բացակայության դեպքում անհրաժեշտ է օգտագործել շարժական ցանկապատեր, որոնցից առավել արդյունավետ են էլեկտրացանկապատերը:

21. Բնական խոտհարքներն օգտագործման են տրամադրվում խոտհնձի նպատակով: Խոտհնձի լավագույն ժամկետ է սահմանվում բուսածածկում գերակշռող արժեքավոր հացազգի (դաշտավլուկազգի) խոտաբույսերի հասկակալումից մինչև ծաղկման, իսկ թիթեռնածաղկավոր (բակլազգի) խոտաբույսերի դեպքում՝ կոկոնակալումից մինչև ծաղկման փուլն ընկած ժամանակաշրջանը:

22. Բնական խոտհարքներում խոտհունձն իրականացվում է 7-10 օրվա ընթացքում, երբ խոտի բարձրությունը հողի մակերեսից կազմում է 4-6 սմ:

23. Բնական խոտհարքներում յուրաքանչյուր երրորդ տարում խոտհունձն իրականացվում է խոտհնձի սեզոնի վերջում՝ բույսերին սերմնակալման և բնական վերարտադրության հնարավորություն ընձեռելու նպատակով:

ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ

ՔԱՐՏՈՒՂԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ *ԳՈՀԱՐ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ Ա Վ Ա Գ Ա Ն Ի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

7 փետրվարի 2017թ. N 24-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՈՏՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ ԸՍՏ ԱՐՈՏԱՎԱՅՐԵՐԻ ԵՎ ԽՈՏՀԱՐՔՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՐԳԻ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՆԴԱՊԱՀԻ ՀԱՍՏԻՔ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՆԴԱՊԱՀԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 28-րդ կետով ավագանին **ո ր ո շ ու մ է՝**

1. Ջերմուկ համայնքի վարչական տարածքում գտնվող արոտների օգտագործումը ըստ արոտավայրերի և խոտհարքների օգտագործման կարգի կազմակերպելու համար սահմանել հանդապահի հաստիք 6-ամսյա ժամկետով /մայիս-հոկտեմբեր/՝ ամսական ՀՀ նվազագույն աշխատավարձի չափով:

2. Հաստատել հանդապահի աշխատանքի նկարագիրը՝ համաձայն կից հավելվածի:

Ավագանու անդամներ՝

ազգանուն, անուն, հայրանուն	կողմ	դեմ	ձեռնպահ
Բաբայան Կավկազ Զավենի	բացակա		
Բաբաջանյան Սանասար Խաչատուրի			
Բագրատյան Արտակ Կառլենի	բացակա		
Բունիաթյան Մխիթար Խաչատուրի			
Գևորգյան Արտավազդ Վարազդատի			
Գրիգորյան Արմեն Գրիշայի			
Համբարձումյան Մխիթար Սամվելի	բացակա		
Հովհաննիսյան Նարեկ Հարությունի			
Սարգսյան Հասմիկ Ժորայի			
Սիմոնյան Արտուշ Էդվարդի			
Ստեփանյան Գագիկ Ստեփանի			

Որոշումն ընդունված է՝ կողմ- ....8..... դեմ-.....0..... ձեռնպահ- ..0..

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2017 փետրվարի 7
Ջերմուկ

Հավելված
Ջերմուկ համայնքի ավագանու 2017 թվականի
փետրվարի 7-ի N 24-Ա որոշման

ՀԱՆԴԱՊԱՀԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆԿԱՐԱԳԻՐ

Պաշտոնը՝ հանդապահ

Գործատուն՝ Ջերմուկի համայնքապետարան

Հաշվետու է՝ Ջերմուկ համայնքի ղեկավարին

Աշխատանքային պարտականությունների նկարագիրը

Հանդապահը պարտավոր է.

- Ազնվորեն և բարեխղճորեն պահպանել սույն կանոնակարգը
- Ժամանակին, պատշաճ որակով իրականացնել աշխատանքային պարտականությունները և ստացած կարգադրությունները
- Պահպանել աշխատանքի անվտանգության տեխնիկայի կանոնները
- Խնայողաբար և ըստ նշանակության օգտագործել աշխատանքի կազմակերպման համար իրեն վստահված նյութական ռեսուրսները
- Իրեն վստահված գույքի և ռեսուրսների պաշտպանությանը սպառնացող վտանգի ծագման մասին անմիջապես տեղեկացնել ղեկավարությանը և իր լիազորությունների և հնարավորությունների սահմանում կանխել դրանց հետագա տարածումը:
- Աշխատանքային պարտականությունների արդյունավետությունը ապահովելու նպատակով, մշտապես բարելավել մասնագիտական հմտությունները:

Աշխատանքային պարտականություններն ընդգրկում են հետևյալը.

1. Մասնակցել համայնքի վարչական տարածքում գտնվող արոտավայրերի և խոտհարքների օգտագործման կարգի (այսուհետ՝ արոտների օգտագործման կարգ) մշակման գործընթացին
2. Մասնակցել ֆերմերների շրջանում արոտների օգտագործման կարգ հետ կապված տեղեկատվության և տեղեկատվական նյութերի տարածմանը
3. Համաձայն արոտների օգտագործման կարգ ուղղորդել հովիվներին, նախիրների և հոտերի հերթ պահողներին արոտների արածացման գործընթացի հետևողական կազմակերպման և պահպանման հարցում
4. Իրականացնել ամենօրյա հսկողություն արոտների օգտագործման կարգ պատշաճ կիրառման ուղղությամբ համայնքում

5. Հետևել և պաշտպանել մշակովի դաշտերը /բազմամյա խոտաբույսերի, հացազգի մշակաբույսերի, այգիների, բանջար-բոստանային կուլտուրաների/ չնախատեսված արածեցումներից
6. Արածեցման ընթացքում նկատած խախտումների վերաբերյալ ձեռնարկել համապատասխան միջոցառումներ խախտումը կանխելու նպատակով և տեղեկացնել համայնքապետարանին
7. Համայնքի արոտների արածեցման ընթացքի վերաբերյալ տրամադրել ամենօրյա տեղեկատվություն համայնքի ղեկավարին
8. Ներկայացնել ամսական հաշվետվություն կատարված աշխատանքի վերաբերյալ
9. Կատարել համայնքի ղեկավարի կողմից տրված լրացուցիչ հանձնարարությունները

ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՔԱՐՏՈՒՂԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ ԳՈՀԱՐ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ Ա Վ Ա Գ Ա Ն Ի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

7 փետրվարի 2017թ. N 25-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 10-Ի N 60-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 16-Ի N 10-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՉԵՂՅԱԼ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 11-րդ և 28-րդ ենթակետերի և 28-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ ենթակետի հիման վրա, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ կետի 1-ին և 3-րդ կետերին համապատասխան ավագանին **ո ր ո շ ու մ է՝**

1. Ջերմուկի համայնքի ավագանու 2013 թվականի նոյեմբերի 10-ի «Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Ջերմուկ համայնքի ղեկավարի ամսական վարձատրության չափը, համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը, աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» N 60-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

ա) 1-ին կետում «357 750» թիվը փոխարինել «332 750» թվով.

բ) հավելված N 2-ը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն որոշման հավելվածի:

2. Չեղյալ ճանաչել Ջերմուկ համայնքի ավագանու 2017 թվականի հունվարի 16-ի «Ջերմուկ համայնքի ավագանու 2016 թվականի նոյեմբերի 10-ի N 60-Ա որոշման հավելված 2-ում փոփոխություններ կատարելու մասին» N 10-Ա որոշումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից և տարածվում է 2017 թվականի հունվարի 1-ից հետո առաջացած հարաբերությունների վրա:

Ավագանու անդամներ՝

ազգանուն, անուն, հայրանուն	կողմ	դեմ	ձեռնպահ
Բաբայան Կավկազ Ջավենի	բացակա		
Բաբաջանյան Սանասար Խաչատուրի			

Բագրատյան Արտակ Կառլենի բացակա			
Բունիաթյան Մխիթար Խաչատուրի			
Գևորգյան Արտավազդ Վարազդատի			
Գրիգորյան Արմեն Գրիշայի			
Համբարձումյան Մխիթար Սամվելի բացակա			
Հովհաննիսյան Նարեկ Հարությունի			
Սարգսյան Հասմիկ Ժորայի			
Սիմոնյան Արտուշ Էդվարդի			
Ստեփանյան Գագիկ Ստեփանի			

Որոշումն ընդունված է՝ կողմ- ...8..... դեմ-.....0..... ձեռնպահ- ...0..

/ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2017 փետրվարի 7
Ջերմուկ

Հավելված 2
Ջերմուկ համայնքի
ավագանու 2017 թվականի
փետրվարի 7-ի N 25-Ա որոշման

ՋԵՐՄՈՒԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

Հ/Հ	Հաստիքի անվանումը	հաստիք	պաշտոնային դրույքաչափ	ընդհանուր աշխատավարձ
1	Համայնքի ղեկավար	1	332750	332750
2	Համայնքի ղեկավարի տեղակալ	1	270950	270950
3	Բնակավայրի վարչական ներկայացուցիչ	4	200000	800000
4	Համայնքի ղեկավարի օգնական	1	180000	180000
5	Համայնքի ղեկավարի խորհրդական	1	200000	200000
	ԸՆԴԱՄԵՆԸ	8	1183700	1783700
	ԱՇԽԱՏԱԿԱԶՄ			
6	Աշխատակազմի քարտուղար (1.2-1)	1	266200	266200
7	Գլխավոր մասնագետ-ճարտարապետ (2.3-3)	1	194670	194670
8	Առաջատար մասնագետ (3.1)	1	141603	141603
9	Առաջատար մասնագետ (3.1)	1	141603	141603
10	Առաջատար մասնագետ (3.1)	1	141603	141603
11	Առաջատար մասնագետ (3.1)	1	141603	141603
12	Առաջատար մասնագետ (3.1)	1	141603	141603
13	2-րդ կարգի մասնագետ (3.3)	1	106548	106548
14	2-րդ կարգի մասնագետ (3.3)	1	106548	106548
15	2-րդ կարգի մասնագետ (3.3)	1	106548	106548
16	2-րդ կարգի մասնագետ (3.3)	1	106548	106548
	ԸՆԴԱՄԵՆԸ	11	1595077	1595077
	ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԲԱԺԻՆ			
17	ֆինանսական բաժնի պետ (2.1-4)	1	244200	244200
18	առաջատար մասնագետ (3.1-9)	1	141603	141603
19	առաջատար մասնագետ (3.1-11)	1	141603	141603
20	առաջատար մասնագետ (3.1-10)	1	141603	141603
21	առաջատար մասնագետ (3.1-12)	1	141603	141603
	ԸՆԴԱՄԵՆԸ	5	810612	810612
	ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏԻ ԲԱԺԻՆ			
22	Ներքին աուդիտի բաժնի պետ (2.1-3)	1	244200	244200
	ԸՆԴԱՄԵՆԸ	1	244200	244200
	ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՋԵՐՄՈՒԿԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺԻՆ			
23	բաժնի պետ (1.3-1)	1	264623	264623
24	գլխավոր մասնագետ (2.3-5)	1	189885	189885
25	առաջատար մասնագետ (3.1-4)	1	141603	141603
26	առաջատար մասնագետ (3.1-5)	1	141603	141603
27	2-րդ կարգի մասնագետ (3.3-1)	1	106548	106548
	ԸՆԴԱՄԵՆԸ	5	844262	844262
	ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԿԱՑՈՒԹՅԱՆ ԱԿՏԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ ՋԵՐՄՈՒԿԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺԻՆ			
28	բաժնի պետ (1.3-2)	1	264623	264623
	ԸՆԴԱՄԵՆԸ	1	264623	264623

	ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՄՊԱՍԱՐԿՄԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄ			
29	համակարգչային սարքեր սպասարկող	1	141603	141603
30	տեղեկատվական համակարգի օպերատոր	1	141603	141603
31	հավաքարար	1	130000	130000
31	հավաքարար	2	100000	200000
31	վարորդ	1	100000	100000
	ԸՆԴԱՄԵՆԸ	6	613206	713206
	ԸՆԴՀԱՆՈՒՐԸ	37	5555680	6255680

ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶԻ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝

ԳՈՀԱՐ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ Ա Վ Ա Գ Ա Ն Ի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

7 փետրվարի 2017թ. N 26-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐՈՒՄ ԱՆԱՍՆԱԲՈՒԺԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԴԻՄԱՑ ԱՆԱՍՆԱԲՈՒՅԺԻՆ ՎՃԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄԵԿ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ԱՆԱՍՆԱԳԼԽԱՔԱՆԱԿԻ ՀԱՇՎՈՎ ԳՈՒՄԱՐԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 42-րդ ենթակետի համաձայն ավագանին **ո ր ո շ ու մ է՝**

1.Համայնքի ղեկավարի կողմից համայնքի կազմի մեջ մտնող գյուղական բնակավայրերում անասնաբուժական ծառայության աշխատանքներին աջակցելու նպատակով անասնաբույժին՝ անասնաբուժական ծառայությունների դիմաց վճարել ըստ պայմանական անասնագլխաքանակի հաշվով:

2. Մեկ պայմանական անասնագլխաքանակի անասնաբուժական ծառայության դիմաց սահմանել 100 ՀՀ դրամ վճար՝ հիմք ընդունելով ստորև նշված գործակիցները.

խոշոր եղջերավոր կենդանիներ ՝ 1.0 միավոր

մանր եղջերավոր կենդանիներ՝ 0.6 միավոր

խոզ՝ 0.3 միավոր

ձի՝ 0.6 միավոր

թռչուն ՝ 0.1 միավոր

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Ավագանու անդամներ՝

ազգանուն, անուն, հայրանուն	կողմ	դեմ	ձեռնպահ
Բաբայան Կավկազ Զավենի	բացակա		
Բաբաջանյան Սանասր Խաչատուրի			

Բագրատյան Արտակ Կառլենի բացակա			
Բունիաթյան Մխիթար Խաչատուրի			
Գևորգյան Արտավազդ Վարազդատի			
Գրիգորյան Արմեն Գրիշայի			
Համբարձումյան Մխիթար Սամվելի բացակա			
Հովհաննիսյան Նարեկ Հարությունի			
Սարգսյան Հասմիկ Ժորայի			
Սիմոնյան Արտուշ Էդվարդի Է/ մասնակցել			
Ստեփանյան Գագիկ Ստեփանի			

Որոշումն ընդունված է՝ կողմ- ...7..... դեմ-.....0..... ձեռնպահ- 0

/ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2017 փետրվարի 7
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ Ա Վ Ա Գ Ա Ն Ի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

7 փետրվարի 2017թ. N 27-Ա

«ՁՆԵՄԱՐԴՈՒԿ 2017՝ ՁՆԵ ԱՐՎԵՍՏԻ ՓԱՌԱՏՈՆ» ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՀԱՄԱՔԱՂԱՔԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՄԱՆԸ ԴՐԱՄԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՑԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 7-րդ ենթակետին համապատասխան ավագանին **ո ր ո շ ու մ է՝**

1. Համաձայնվել «Ձնեմարդուկ 2017՝ ձնե արվեստի փառատոն» երիտասարդական համաքաղաքային միջոցառմանը դրամական աջակցություն ցուցաբերելու վերաբերյալ համայնքի ղեկավարի առաջարկությանը:

2. Սույն որոշման առաջին կետում նշված նպատակի համար 700 000 (յոթ հարյուր հազար) դրամի չափով ֆինանսական հատկացում կատարել համայնքի բյուջեի միջոցներից:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից

Ավագանու անդամներ՝

ազգանուն, անուն, հայրանուն	կողմ	դեմ	ձեռնպահ
Բաբայան Կավկազ Ջավենի բացակա			
Բաբաջանյան Սանասր Խաչատուրի			
Բագրատյան Արտակ Կառլենի բացակա			
Բունիաթյան Մխիթար Խաչատուրի			
Գևորգյան Արտավազդ Վարազդատի			
Գրիգորյան Արմեն Գրիշայի			
Համբարձումյան Մխիթար Սամվելի բացակա			
Հովհաննիսյան Նարեկ Հարությունի			
Սարգսյան Հասմիկ Ժորայի			

Սիմոնյան Արտուշ Էդվարդի			
Ստեփանյան Գագիկ Ստեփանի չի հասնում			

Որոշումն ընդունված է՝ կողմ- .....5..... դեմ-.....1..... ձեռնպահ- .....1.....

/ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2017 փետրվարի 7
Ջերմուկ